

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ՝ ԸՍՏ 1941–1944 ԹԹ. ԲՈՂՈՔԱԳՐԵՐԻ

ԳԱԳԻԿ ԺԱՄՅԱՐՅԱՆ



Այս հոդվածը գրվել է Հայնրիխ Բյոլ հիմնադրամի երևանյան գրասենյակի
«Երկրորդ համաշխարհային պատերազմը և կանայք»
փոքր հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՈՏԵԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ՝ ԸՍՏ 1941–1944 ԹԹ. ԲՈՂՈՔԱԳՐԵՐԻ

ԳԱԳԻԿ ԺԱՄՅԱՐՅԱՆ

Այս հոդվածում արտահայտված մտքերը հեղինակինն են և չեն
արտահայտում Հայնրիխ Բյոլ հիմնադրամի տեսակետը:

 **HEINRICH BÖLL STIFTUNG**
ԵՐԵՎԱՆ
Հարավային Կովկասի տարածաշրջան

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՆԱՄԱԿՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ «ՅԱՐԱԶԱՏ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ	6
ԿԱՆԱՆՑ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՅԱՐՄԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ	12
ԱՄՓՈՓՈՒՄ	19

Կազմի լուսանկարը՝ Դիլիջան արխիվարիումի կայքից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը վերաբերում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, մասնավորապես 1941–1944 թվականների ընթացքում Խորհրդային Հայաստանի հատկապես գյուղական շրջանների կանանց նկատմամբ իրականացված սեռական, ֆիզիկական և տնտեսական բնույթի ոտնձգություններին: Արխիվային սկզբնաղբյուրները, որոնք շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ, արտացոլում են ՀԽՍՀ տարբեր շրջաններում տեղական պաշտոնյաների՝ պատերազմի տարիներին իրականացրած այնպիսի չարաշահումներ, որոնցից տուժել են կանայք: Մեր համոզմամբ դրանք կարող են լույս սփռել կանանց առնչվող մի շարք հիմնախնդիրների վրա: Պատերազմի տարիներին տեղական պաշտոնյաների չարաշահումների կապը մեր կողմից ուսումնասիրվող թեմայի հետ ակնհայտ դարձավ այս աղբյուրներին ծանոթանալուց հետո:

Ըստ այս նյութերի՝ պատերազմի տարիներին Խորհրդային Հայաստանի տարբեր «տրամաչափի» (հիմնականում տեղական) պաշտոնյաներ չարաշահել են կանանց նկատմամբ իրենց դիրքը իրենց վստահված բնակավայրերում: Կանանց հիմնախնդիրներն այս նյութերում կարծես ածանցյալ, երկրորդական բնույթի են: Եվ տպավորություն է ստեղծվում, որ այս նյութերը լուսաբանում են բացառապես պաշտոնյաների վարքը: Սակայն եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նշված դեպքերում կանայք դարձել էին հենց նրանց վարքագծի զոհը, ու դրանք ոչ թե մասնավոր դեպքեր են, այլ բավականին մեծ տարածում են ունեցել, կարծում ենք, այս իրողությունները նույնպես որոշ, թեկուզև ընդհանրացված գնահատականների կարիք ունեն: Մեր ուսումնասիրած նյութերը վերաբերում են պատերազմի տարիներին գյուղական շրջաններում պաշտոնյաների կոռուպցիոն վարքագծին, նրանց կողմից թույլ տրված հովանավորչությանը, տնտեսական չարաշահումներին, հանրային ունեցվածքի յուրացումներին և այլն: Սրանցից առաջին հերթին տուժում էին հասարակության խոցելի խմբերը, որոնք տնտեսական և սոցիալական կախվածություն ունեին պետությունից: Այս խմբերի մեջ տղամարդկանց ռազմաճակատ ուղարկած ընտանիքների անդամները, մասնավորապես կանայք, պատերազմի պատճառով զրկվել էին ոչ միայն անձնական, այլ նաև տնտեսական պաշտպանվածության երաշխիքներից: Եվ բնական է, որ նրանց կյանքում այս կամ այն չափով արտացոլված պետք է լիներ ղեկավար օղակներում տարածված վարչարարության և հակաօրինական կոպիտ գործելակերպը: Իհարկե, նյութը հնարավորություն չի տալիս կանանց «դուրս բերելու», առանձնացնելու այս իրողությունների համատեքստից, կենտրոնանալու բացառապես նրանց ճակատագրի վրա, սակայն կարծում ենք, որ փաստաթղթերում նկարագրված երևույթները տալիս են նրանց վիճակն ընդհանուր գծերով գնահատելու հնարավորություն:

Սույն ուսումնասիրության համար օգտագործված հետազոտական նյութերը բաժանվում են երկու խմբի: Առաջին խումբ աղբյուրները Խորհրդային Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավար կազմին սովորական մարդկանցից ուղարկված դիմում–բողոքներ, խնդրագրեր և նամակներ են,

որոնք վերաբերում են սոցիալ-տնտեսական, կենցաղային կամ տարաբնույթ այլ հարցերի: Սրանց մեջ հնարավորինս առանձնացրել ենք այնպիսիք, որոնցում արձարծվում են նաև կանանց կյանքի պայմաններին վերաբերող խնդիրները: Նշենք կարևոր մի հանգամանք. երկու տասնյակից ավելի նամակների հետազոտության արդյունքում նկատել ենք այսպիսի միտում. հետպատերազմյան առաջին ամիսներին կանանց վերաբերող խնդիրները դիմումներում բավական սակավաթիվ են, այս դիմումների թիվը կտրուկ աճում է 1942 թվականին, հաջորդ տարի սկսում է նվազել, իսկ 1944 և 1945 թվականներին դառնում է աննշան: Սա գուցե կարելի է բացատրել այն հանգամանքով, որ հիմնականում 1942 թվականի վերջին և 1943-ի սկզբին գյուղեր են վերադառնում առաջին զորացրված կարմիրբանակայինները, տղամարդկանց թիվը գյուղերում սկսում է ավելանալ: Տրամաբանական է, որ տեղական պաշտոնյաների՝ բնակչության հետ շփումներում այդուհետ պետք է ցուցաբերվեին զսպվածություն և զգուշավորություն: 1943 թվականից սկսած՝ մենք ավելի շատ հանդիպում ենք բողոքների արդեն կարմիրբանակայիններից, որոնք վերաբերում են իրենց ընտանիքների ծանր սոցիալ-կենցաղային պայմաններին:

Երկրորդ խումբ նյութերն ավելի պաշտոնական բնույթի փաստաթղթեր են: Սրանցում կուսակցական ղեկավարության կողմից խորհրդային Հայաստանի հատկապես գյուղական շրջաններում կազմակերպված ստուգումների արձանագրություններ են, ինչպես նաև առանձին չարաշահումներով պատկան մարմինների հաղորդումներ և զեկուցագրեր: Մեր առջև դրված հետազոտական խնդիրն է՝ ա) պարզել կանանց նկատմամբ իրագործվող ապօրինությունների շրջանակը, դրանց տարածված ձևերը, բ) բացահայտել, թե ինչպես էր խորհրդային իշխանությունն այսօրինակ ապօրինություններին արձագանքում:

ՆԱՄԱԿՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆԸ. ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐ «ՅԱՐԱԶԱՏ» ԿՈՒՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Կուսակցական բարձր ղեկավարությանն ուղարկված նամակները, չնայած դրանցում նկարագրվող դեպքերի բազմազանությանը, ունեն որոշ ընդհանրություններ: Այստեղ նկարագրվում են տեղական չինովսիկների վարքագծային որոշ ընդհանրություններ, որոնք ստեղծում են տեղական պաշտոնյայի հավաքական բնութագիր՝ կոպիտ, ինքնահավան, սեփական անպատժելիության հարցում ինքնավստահ, բիրտ վարչարար, որին անհանգստացնում է միայն սեփական բարեկեցությունը: Նամակներից ստացվող ընդհանուր տպավորությունն այնպիսին է, որ եթե շատերի համար պատերազմն անձնական ողբերգություն էր, ապա այս պաշտոնյաների համար՝ կոռուպցիոն գործունեությամբ հարստանալու հնարավորություն: Կրասնոսելսկի շրջանի կոլտնտեսություններից մեկի վարչության նախագահը, ըստ գյուղացիների ներկայացրած բողոքի, ասել էր բառացիորեն հետևյալը. «Պատերազմն ինձ համար է, որ ոչ մեկն ինձ չխանգարի իմ տների կառուցման գործում»: Բողոքի հեղինակները նշում էին, որ նախագահը «կոլխոզի միջոցներով ամբողջ գյուղի աշխատող ուժը տրամադրել է իր շենքերի կառուցման համար»¹: Տեղական պաշտոնյաների վարքագծի նշված դրսևորումների համատեքստում էլ, կարծում ենք, պետք է դիտարկել նաև կանանց նկատմամբ նրանց վերաբերմունքը, հատկապես այն կանանց, որոնց ընտանիքի տղամարդիկ ռազմաճակատում էին:

Կանանց նկատմամբ պաշտոնյաների ոտնձգություններն արտահայտվում էին տարբեր եղանակներով՝ հայիոյանքներից ու սեռական ոտնձգություններից մինչև տնտեսական բնույթի հալածանքներ: Ներկայացնենք սա հաստատող մի շարք դրվագներ: Այսպես՝ 1942 թ. Աշտարակի շրջանի գյուղերից մեկի 75 կոլտնտեսական կանանցից նամակ էր ստացվել ՅԿ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Յարոբյանյանի անունով: Կանայք բողոքում էին կոլտնտեսության նախագահից, որն իր մի խումբ համախոհների հետ թալանում էր կոլտնտեսության ունեցվածքը: «Մեր ամուսիններին և զավակներին ուղարկել ենք Կարմիր բանակ, որպեսզի հայրենիքը պաշտպանեն, իսկ մենք այստեղ շատ դժվարին պայմաններում ենք ապրում, և ոչ մի օժանդակություն ցույց չի տալիս մեզ: Երբ մենք մոտենում ենք նրան մեր տնտեսություններին որևէ օժանդակություն խնդրելու, նա մեզ օգնելու փոխարեն ուրիշ առաջարկություններ է անում: Երբ մենք գնում ենք գրասենյակ մի կարևոր խնդրի համար, թանկերիցս բռնում և դուրս է շարտում լկտի հայիոյանքներով և շատ դեպքերում ծեծում: **Այս կոպիտ անձնավորության մասին շրջանում էլ գիտեն, բայց պաշտպանում են և ոչ մի միջոցառում չեն ձեռնարկում, քանի որ կաշառված են մեղրով, պանրով, յուղով,**

1 ՅԱԱ ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 92:

պուպոթով և այլ մթերքներով»,– գրված է նամակում²:

Հաջորդ նամակը նույնպես բողոքներ է պարունակում ոչ միայն կոլտնտեսության նախագահի և պահեստապետի, այլ նաև շրջանային մի շարք պաշտոնյաների մասին: Նշվում է, որ գյուղի կարիքները լիովին անտեսված են շրջանի ղեկավարության կողմից, որ կոլտնտեսության նախագահը զբաղված է մշտական թալանով, իսկ պահեստապետը՝ հարբեցողությամբ և կարմիրբանակայինների կանանց խայտառակելով³:

1942 թվականին Վեդու շրջանի գյուղերից մեկի կոլտնտեսության նախագահը կոլտնտեսականների ներկայությամբ երեք օղակավար կանանց հայիոյել էր հետևյալ խոսքերով՝ «ձեզ նման օղակավարներին պետք է պառկեցնել գետնին և...»⁴: Ապարանի շրջանի գյուղերից մեկի կոլտնտեսության նախագահը, բացի այն, որ իր անձնական բարեկեցությունը հիմնականում կառուցում էր կարմիրբանակայինների ընտանիքներին տրամադրվող միջոցների հաշվին, նաև հայիոյում և ծեծում էր նրանց հարազատներին⁵:

Հաջորդ նամակի մեջ ի թիվս կոլտնտեսության նախագահի թույլ տված այլ չարաշահումների հանդիպում ենք մի փաստի, որն, ըստ էության, կարելի է դիտարկել որպես քրեական հանցագործության մասին հաղորդում: Անանուն նամակի հեղինակը մեղադրում է Սևանի շրջանի գյուղերից մեկի կուսկազմակերպիչին, որը գյուղում իր աշխատելու ողջ ընթացքում վազել է կանանց հետևից և անգամ բռնաբարել գյուղի աղջիկներին⁶:

Գյուղերում կատարվող անօրինականությունների մասին հաճախ ասեցանքում էին նաև կարմիրբանակայինները: 1942 թվականին Վեդու շրջանի գյուղերից մեկի բնակիչը, որը զորացրվելով տասնօրյա արձակուրդ էր ստացել հրամանատարությունից, իր տպավորությունները գյուղի վիճակի մասին պատմում է Գրիգոր Հարությունյանին: Նամակում նշում է, որ կոլտնտեսության հոգսերը նախագահին չեն հետաքրքրում, որովհետև «զբաղված է սիրահարությամբ»: Լքելով իր ընտանիքը և երեխաներին՝ կոլտնտեսության միջոցների հաշվին նախագահը շռայլ ծախսեր է անում իր սիրուհիների համար⁷:

Բերիայի շրջանի գյուղերից մեկի բնակչուհին իր նկատմամբ տնտեսական հալածանքների և անմարդկային վերաբերմունքի մասին 1942 թվականին գրել էր Գրիգոր Հարությունյանին: Ամուսնու՝ ռազմաճակատ մեկնելուց հետո այս կնոջ ինամբին մնացել էին վեց անչափահաս երեխաներ: Նրանց հոգսը կինը հոգացել էր հորից իրեն որպես ժառանգություն մնացած փոքրիկ հողամասի եկամուտով: **Ստանալով շրջխորհրդի նախագահի աջակցությունը**՝ գյուղի կոլտնտեսության նախագահը փորձում է յուրացնել այդ հողամասը: Կինը պատմում է, որ իր մտադրությունն իրագործելու համար նախագահը պարբերաբար ծեծում և հայիոյում է իրեն և իր երեխաներին, ավելին՝ նրա հրահանգով գյուղացիները ևս պարբերաբար հարձակվում են այս ընտանիքի վրա: Հալածանքները

2 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 4:

3 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 91:

4 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 159:

5 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 106, թ. 5:

6 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 106, թ. 39:

7 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 158:

շուտով անտանելի են դառնում, և կինը ստիպված տեղափոխվում է քաղաք⁸: Գյուղացիների հետ շփումներում կոլտնտեսության ղեկավարների վրեժխնդիր վերաբերմունքի մասին մյուս փաստը վերաբերում է Ազգաբնակչության շրջանի գյուղերից մեկին: Գրիգոր Հարությունյանին 1944 թվականին ուղարկված նամակներից մեկում խոսվում է գյուղի կոլտնտեսության նախագահի մասին, որն անվայել առաջարկներ էր արել չորս կանանց: Եվ մերժում ստանալով՝ զգալիորեն կրճատել էր նրանց ընտանիքների համար նախատեսվող հացի չափաբաժինները⁹:

Կոլտնտեսության նախագահներից հետ չէին մնում նաև որոշ «ավելի մեծ տրամաչափի» պաշտոնյաներ՝ շրջկոմի քարտուղարներ, հրահանգիչներ, ժողդատավորներ, դատախազներ, զինկոմներ և այլք, որոնք էլ, ըստ մեր ուսումնասիրած նյութերի, կոլտնտեսությունների ղեկավարների հիմնական հովանավորողներն ու նրանց առաջարկած «բարիքներից» սևվողներն էին: Սևանի շրջանի այսպիսի պաշտոնյաներից մեկի վերաբերյալ 1943 թվականին ուղարկված անանուն նամակում պատմվում է, թե ինչպես է նա ահաբեկում շրջանի գյուղերից մեկի ազգաբնակչությանը: Նշվում է, որ նրանից վախենում է նաև գյուղի կոլտնտեսության նախագահը, որի աղջկա հետ սույն պաշտոնյան հարաբերություններ է ունեցել, հղիացրել է նրան, իսկ հետո խայտառակությունից խուսափելու նպատակով խեղդել են երեխային: Նամակում պատմվում է նաև սույն պաշտոնյայի սիրային այլ կապերի մասին, նշվում է, որ իր սիրային հանդիպումները նա կազմակերպում էր նաև իր աշխատասեյակում արհամարիելով դռան հետևում սպասող կոլտնտեսականներին¹⁰:

Կանանց ֆիզիկական և բարոյական տառապանքներն առավել պատկերավոր և ընդհանրական ձևով արտահայտված են Կրասնոսելսկի շրջանի գյուղերից մեկի մի խումբ կոլտնտեսական կանանց անանուն նամակում, որի հեղինակներն այնքան են ահաբեկված և հիասթափված, որ իրենց գյուղի կարգերը համեմատում են Իվան Ահեղի ժամանակաշրջանի հետ: Կանայք նշում են, որ իրենց գյուղի կուսակցականները կուսակցական են միայն տոմսով, և նրանք «գոյություն ունեն միայն կանանց առաջարկներ անելու համար»: Կանանց շրջանում տիրող տրամադրությունները բավական դիպուկ ներկայացված են նամակի հետևյալ հատվածում. «Եվ թվում է, թե պատերազմը մեր (նշվում է գյուղի անունը) գյուղի համար սկսվել է, որ բարոյապես այլասերված նախագահը շարունակի իր գործը: Հապա ինչպե՞ս. գյուղում տղամարդիկ չկան, մնացել են գյուղացի անգրագետ և ամոթխած կանայք (որոնք այս նամակը գրում են ուրիշի ձեռքով), և սա հարմար առիթ է իր համար. գյուղում ո՛ր կնոջը հանդիպում է, կեղտոտ առաջարկ է անում: Գյուղում այլևս անարատ կին չի մնացել:

Վերջիվերջո մենք անասուններ չենք, որ խառնակվենք ամեն մեկի հետ: Եթե կառավարության կողմից կա հրաման, որով մենք պետք է բազմացնենք մարդկությանը՝ ռազմաճակատում զոհվածների փոխարեն, ապա կարող եք առանց կաշկանդվելու այն հրապարակել, ու այդ դեպքում մենք գիտենք, թե ինչպես կայաքարեն մեր ամուսիններն ու եղբայրները: ...Շատ ուրիշ բաներ կան, որոնց մասին կարելի է գրել: Սակայն միևնույնն է: Նույնիսկ առանց իր դիմումի էլ

8 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 106, թ. 32:

9 ՉԱԱ, ֆ. 1, ց. 24, գ. 172, թ. 184:

10 ՉԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 174, թ. 1:

մենք գիտենք, որ իր մեջքը պինդ է, այդ պատճառով էլ վախենում ենք բացահայտ ձևով գրելուց»¹¹: Ինչպես նկատում ենք, նամակի վերջին հատվածը կանանց սոցիալական բողոքին քաղաքական նրբերանգներ է հաղորդում՝ այն իմաստով, որ վերջիններս իշխանության հետ խոսում են վերջնագրի լեզվով: Ըստ Էռլայան հղում է արվում կոմունիստական կուսակցական գաղափարական համակարգին: Կանանց համար որպես այս համակարգի կարևորագույն արժեքային դրսևորում ընկալվում էր իրենց սոցիալական և ֆիզիկական անվտանգության ապահովման միջոցով պետության կողմից իրենց տղամարդկանց պայքարի արժևորումը, ինչն այս դեպքում խաթարվում է: Մեկ այլ նամակում, որտեղ ի թիվս գյուղական պաշտոնյաների չարաշահումների նկարագրված են նաև կարմիրբանակայինների կանանց նկատմամբ նրանց ոտնձգությունները, նամակի հեղինակն իր բողոքն ավարտում է հետևյալ բառերով. «Խնդրում եմ Ձեզ, հուսով եմ, որ թո անմիջական ցուցմունքով կվերանան այս բոլորը, եթե ոչ, ընկեր Չարությունյան, **ժողովուրդը դուրս կգա իր շրջանակներից**»¹²: Սրանք ուշագրավ դրվագներ են՝ այն իմաստով, որ շարադրանքի նման ոճը հատուկ չէր կոմկուսի առաջնորդներին ուղարկվող նամակներին: Ընդհակառակը, մարդիկ այսօրինակ դիմումներում որպես կանոն փորձում էին արտահայտել իրենց անմասցորդ վստահությունը նրանց գործունեության նկատմամբ, ինչն ուղիղ համեմատական էր տեղական չինովնիկների նկատմամբ անվստահությանը: Այս գործելակերպը, ըստ ռուս պատմաբան Անդրեյ Սավինի, տարածված էր նաև մինչխորհրդային Ռուսաստանում, սակայն նոր հատկանիշներ ձեռք բերեց արդեն խորհրդային իշխանության տարիներին: «Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, — գրում է Սավինը, — որ ազգաբնակչությունը, հատկապես գյուղացիությունը, ավանդաբար և ոչ առանց հիմքերի անվստահություն էր տածում իշխանության տեղական ներկայացուցիչների հանդեպ, ապա ոչ մի զարմանալի բան չկա, երբ «սովորական մարդիկ նախընտրում էին «արդարություն փնտրել» խորհրդային պետական-կուսակցական բուրգի վերևում՝ դիմելով անմիջապես «առաջնորդներին»»¹³: Մեր ներկայացրած նամակների պարագայում, ինչպես տեսանք, որպես բուրգի գագաթ հանդես է գալիս հիմնականում ՉԿ(Բ)Կ կենտկոմի ղեկավարությունը՝ ի դեմս առաջին քարտուղար Գրիգոր Չարությունյանի: Սակայն խորհրդահայ իրականության մեջ եղել են նաև դեպքեր, երբ մարդիկ դիմել են ավելի բարձր աստիճաններ՝ ԽՍՀՄ առաջնորդներին: Նման դիմում հայտնվեց նաև մեր ձեռքի տակ, և քանի որ ներկայացվող դեպքն ուղղակի առնչություն ունի նաև քննարկվող հիմնախնդրին, այն կներկայացնենք ավելի մանրամասն:

Դեպքը տեղի է ունեցել Կրասնոսելսկի շրջանի գյուղերից մեկում 1941 թվականի հունվարին: Շրջանի կուսկաբինետի (парткабинет) ղեկավարը կենտկոմից հրահանգ է ստանում նշված գյուղում Վ. Լենինի մահվան տարելիցի կապակցությամբ հանդես գալ զեկույցով: Չեկույցից առաջ պաշտոնյան մտնում է գյուղի կարմիրբանակայիններից մեկի տուն՝ նրա կնոջը պատվագրկելու մտադրությամբ: Կնոջ և երեխայի բարձրացրած աղմուկին վրա են հասնում ամուսնու հորեղբայրները, որոնցից մեկը ցանկանում է տեղում կացնահարել պաշտոնյային, սակայն մյուս հորեղբայրը թույլ չի տալիս դա անել: Իր

11 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 106, թ. 61:

12 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 91:

13 Савин А., Письма во власть как специфическая форма политической адаптации советских граждан в 1930–е годы, Вестн. НГУ. Серия: История, филология. 2016. Т. 15 № 8: История, стр. 134.

անհաջողությունից հուսահատված՝ պաշտոնյան հեռանում է գյուղից՝ այդպես էլ զենկույցը չկարդալով: Կնոջ անունից ամուսնու հորեղբայրը Թիֆլիսից բողոք է ուղարկում ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմ՝ մարշալ Սեմյոն Տիմոշենկոյին, սակայն նամակը բացում է հեռագրավարուհիներից մեկը և նպատակահարմար չի համարում նման բովանդակությամբ նամակ ուղարկելու ԽՍՀՄ մարշալին: Դեպքը լայն արձագանք է ստանում գյուղի տեղական կուսակցական կազմակերպությունում, որը կազմակերպում է սեփական հետաքննությունը: Հիմնվելով պաշտոնյայի արդարացումների վրա՝ առ այն, որ կինն ինքն է նրան հրավիրել իր տուն, և որ սա առաջին դեպքը չէ, երբ այդ կինն իրեն առաջարկում է կենակցել, տեղական կուսակցական կազմակերպությունը հանգում է եզրակացության, որ իրադարձությունների մեղավորն ու սադրողը կինն է: Սակայն մեր ձեռքի տակ է նաև ՀԽՍՀ կոմկուսի կենտկոմի արտասահմանյան գործերով բաժնի հրահանգչի եզրակացությունը, որում նա կեղծիք է համարում պաշտոնյայի արդարացումները, հաստատված է համարում նրա կողմից կարմիրբանակայինի կնոջը բռնաբարելու փորձը և համոզմունք է հայտնում, որ նրան ոչ միայն պետք է ազատել զբաղեցրած պաշտոնից, այլ նաև ենթարկել կուսակցական խիստ պատասխանատվության¹⁴:

Այս գործում ուշագրավ մի քանի հանգամանք կա: Առաջինն այն է, որ կինը որոշում է գրել ոչ թե ՀԿ(բ)Կ կենտկոմին, այլ անձամբ ԽՍՀՄ մարշալին: Սա եղել է ոչ թե իր, այլ ամուսնու հորեղբոր նախաձեռնությունը, կինն այս նամակի բովանդակությանն անգամ չի ծանոթացել: Ակնհայտ է, որ այս դեպքում ամուսնու հորեղբայրը որոշել է ավելի անառարկելի հեղինակություն և ազդեցություն ունեցող մարդու միջոցով հասնել արդարության: ԽՍՀՄ մարշալին դիմելու իրողությունը կարող էր ենթադրել նաև կարմիրբանակայինների ընտանիքների ծանր վիճակին ԽՍՀՄ ռազմական բարձրագույն գերատեսչության ուշադրությունը հրավիրելու և նրա պաշտպանությունը ստանալու նպատակ: Կարևոր հանգամանք է նաև այն, որ գյուղի փոստային բաժանմունքի աշխատակցուհին նպատակահարմար չի համարում այս նամակն ուղարկել մարշալին: Իր արարքն այս հեռագրավարուհին բացատրել է նրանով, որ մտածել է, թե ավելի լավ կլիներ սույն գործով նախ տեղի ունենար տեղական կուսակցական կազմակերպության քննությունը (ուշագրավ փաստ է, որ սովորական հեռագրավարուհին նման որոշումներ կայացնելու իրավունք էր իրեն վերապահում, հավանաբար ոչ առանց կուսակցական ղեկավարության գիտության):

Գործի կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ տեղի ունեցածի վերաբերյալ առկա է երկու՝ իրար տրամագծորեն հակադիր եզրակացություն: Առաջինը գյուղի կուսակցական կազմակերպության եզրակացությունն է շրջանային պաշտոնյայի անմեղության վերաբերյալ, երկրորդը՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի արտասահմանյան կապերի բաժնի հրահանգչի, որի մեջ տեղի ունեցածում պաշտոնյայի մեղավորությունը կասկած չի հարուցում: Առաջին եզրակացությունը, մեր համոզմամբ, թելադրված է գյուղական և շրջանային պաշտոնյաների յուրահատուկ «կորպորատիվ համերաշխությամբ», ինչը նույնիսկ պատերազմի տարիներին մեծ տարածում ստացած կոռուպցիոն և հովանավորչական հարաբերությունների մասին է վկայում: Այս հարաբերությունների օգտին է խոսում նաև այն, որ գյուղացիներն իրենց նամակներում կոլտնտեսության

14 Այս գործով նյութերը տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 110, թ. 4–17:

ղեկավարների մասին հաճախ էին օգտագործում «շրջանում բոլորը տեղյակ են, բայց ձայն չեն հանում», «գիտենք, որ Նրա մեջքն ամուր է» և նման այլ արտահայտություններ, որոնք մեր ուսումնասիրության մեջ հատուկ ընդգծել ենք: Մյուս եզրակացությունը, մեր կարծիքով, թելադրված է ոչ այնքան դեպքին օբյեկտիվ գնահատական տալու մտայնությամբ, որքան այն իրողությամբ, որ նամակ է ուղարկվել ԽՍՀՄ մարշալին: Ճիշտ է, հաջողվում է կանխել այս նամակը հասցեատիրոջը հասցնելը, սակայն հետագա բարդություններից խուսափելու կամ մեկ այլ նամակ արդեն այլ բարձրաստիճան պաշտոնյային ուղարկելու հավանականությունը բացառելու, ինչպես նաև հանրապետության կուսակցական ղեկավարության վարկանիշը Մոսկվայի աչքում չզգցելու համար կենտրոնը ստիպված օբյեկտիվ քննություն է կատարում և պատժում պաշտոնյային:

ԿԱՆԱՆՑ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՈՏՆԱՅԱՐՄԱՆ ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Թե՛ ինչ արձագանքներ էին ստանում գրված նամակները ազգաբնակչության կողմից, ինչ չափանիշներով էր առաջնորդվում կուսակցությունն այս գործերը քննելիս, և ինչ մոտեցումներ կային հատկապես կանանց նկատմամբ իրագործված չարաշահումների վերաբերյալ, օգնում են հասկանալու մեր ուսումնասիրած արխիվային երկրորդ խումբը փաստաթղթերը: Այս փաստաթղթերից պարզ է դառնում, որ բոլոր նամակները մանրամասն ուսումնասիրվում էին: Ընդ որում մեծ նշանակություն էր տրվում նրան՝ ստորագրված են այս նամակները, թե՞ անստորագիր, գրված են մի՞ մարդու կողմից, թե՞ խմբակային նախաձեռնության արդյունք են: Այս հանգամանքները կուսակցական համապատասխան մարմինների կողմից նամակների արժանահավատության կարևոր չափանիշ էին դիտվում: Այս համատեքստում կանանց խնդիրներին վերաբերող շատ նամակներ անհրաժեշտ վստահության չեն արժանանում: Մեր հետազոտության ընթացքում պարզեցինք, որ նամակները, որոնցում կանայք նշում են իրենց անունը, հիմնականում տևտեսական օգնության մասին խնդրագրեր են կամ էլ բողոքներ այլ չարաշահումների մասին: Սեռական ոտնձգությունների, հայրոջանքների կամ ֆիզիկական բռնության մասին նամակները նրանք չէին ուղարկում իրենց անունից: Չի բացառվում, որ նրանք վախենում էին խայտառակվելուց կամ չէին ցանկանում, որ իրենց ամուսինների կամ որդիների վերադարձից հետո բացահայտվեն իրենց հետ կատարված տհաճ իրադարձությունները: Սակայն կուսակցության ներկայացուցիչներն անանուն նամակները ավելի շատ հակված էին ընկալել որպես զրպարտություն: Կային նաև այլ գործոններ, որոնք բացառում էին կանանց նկատմամբ տեղական պաշտոնյաների ապօրինությունների օբյեկտիվ քննությունն ու պատիժը: Սա պարզաբանելու համար ստորև կներկայացնենք հատվածներ մի նամակից, որը ռազմաճակատից վերադարձած երկու զինվորներ (նրանք գերադասել են նամակի մեջ չնշել իրենց անունները) ուղարկել են ՅԿ(Բ)Կ կենտրոն: Նամակում յոթ կետով ներկայացված են Նոր Բայազետի շրջանի գյուղերից մեկի կոլտնտեսության նախագահի ապօրինությունները: Եվ քանի որ նամակի 6–րդ և 7–րդ կետերը վերաբերում են մեր կողմից քննարկվող հարցին, ստորև կմեջբերենք դրանք:

«6. Բոլորին է հայտնի, որ (նշում է կոլտնտեսության նախագահի անունը)¹⁵ սեռական հարաբերություններ է ունենում կարմիրբանակայիների և կոլտնտեսականների կանանց հետ՝ **շնորհիվ նյութական աջակցության** (բերվում

15 Սույն հոդվածում հնարավորինս զերծ ենք մնացել փաստաթղթերում շրջանառվող դեպքերի մասնակիցների անունները հրապարակելուց՝ հաշվի առնելով թեմայի զգայունությունն ու մասնակիցների ժառանգների նկատմամբ պահպանելով մասնագիտական էթիկայի կանոնները:

են այդ կանանց անունները): Նյութական աջակցության մասին հիշատակությունը վկայում է, որ կանանցից շատերը ստիպված են եղել հանդուրժել այս վիրավորանքները, նաև տեղի տալ պաշտոնյաների անվայել առաջարկներին Նյութական որոշակի աջակցության դիմաց, որովհետև սա իրենց ընտանիքները պատերազմի ծանր տարիներին կերակրելու միակ տարբերակն էր:

7. Նրա մոտ տուրուղմփոցը սովորական է, **ինչպես հին կարգերի ժամանակ.**

ա) ծեծեց (նշված է գյուղացու անունը) կնոջը, որը արթորոտվ ազատվեց երեխայից: Նա փոխհատուցեց արձակուրդով, հացով և կաթնամթերքով, ինչի պատճառով այդ կինը չբողոքեց,

բ) հասկերը քաղիանելու պատճառով ծեծեց (նշված է գյուղացու անունը) կնոջը, որը մինչև հիմա պառկած է անկողնում,

գ) ծեծեց (նշված է գյուղացու անունը) հղի կնոջը, որի մոտ արյունահոսություն եղավ: Սակայն կինը երեխայից արթորոտվ չազատվեց,

դ) ...հարվածեց (նշված է կոլտնտեսական կնոջ անունը) փորին՝ ասելով. «Այ մարմնավաճառ, արի իմ տուն, փոխարինիր կնոջս, որ նա կարողանա աշխատել կոլտնտեսությունում: Ու չփորձես համեմատվել նրա հետ»: Օգտվելով նրանից, որ վերջինիս որդին դասալիք է, գնեց այդ կնոջից 300 ռուբլի արժողությամբ գոմեշ՝ իբր կոլտնտեսության համար, բայց գոմեշը իր մոտ է:

Հարց՝ շրջանի ղեկավարները գիտե՞ն արդյոք նրա արարքների մասին: Այո, գիտեն, սակայն լռության են մատնում, այդ իսկ պատճառով էլ կուսակցականները կաշկանդված են, իսկ կոլտնտեսականները ստրկության մեջ են, և երբ բողոքում են, ոչ ոք չի լսում, մատերիալներն էլ մնում են առանց քննության»¹⁶:

Ինչպես նկատում ենք, սույն նամակում ևս առկա են շեշտադրումներ, որոնք ցույց են տալիս հասարակության կողմից կուսակցական գաղափարախոսական արժեքներին տեղական պաշտոնյաների վարքագծի անհամատեղելիության արձանագրումներ, ինչն այս նամակին ևս որոշ քաղաքական նրբերանգներ է հաղորդում: Նամակներում հաճախ էր շեշտվում այն փաստը, որ պաշտոնյայի ոտնձգությունների զոհ են դառնում կարմիրբանակայինների ընտանիքների անդամները: Պատերազմի պայմաններում հասարակության կողմից կարմիրբանակայինների՝ որպես հայրենիքի պաշտպանների վերաբերյալ առանձնահատուկ ընկալում կար, ինչը նրանց ընտանիքները եթե ոչ առանձնահատուկ, համեմայն դեպս կարևոր սոցիալական խումբ էր դարձնում: Եվ այս խմբի նկատմամբ ոտնձգություններն անհամատեղելի էին կուսակցության որդեգրած գաղափարական արժեքներին: Նամակի մեջ «հին կարգերին» հատուկ հղում անելը նույնպես պետք է դիտարկել այս համատեքստում: Նամակի հեղինակներն ամենայն հավանականությամբ սրանով ցանկանում են ցույց տալ, որ գյուղական պաշտոնյաներն իրենց կոպտությամբ վերադարձնում են մինչհեղափոխական «կալվածատիրական» ժամանակների բարբերը, ինչը հասարակության գիտակցության մեջ կխորացնեն «սոցիալիստական» արժեհամակարգի նկատմամբ անվստահությունը: Հիշեցնենք, որ սույն ուսումնասիրության մեջ մենք արդեն անդրադարձել ենք մի նամակի, որի հեղինակներն իրենց գյուղի առօրյան համեմատել էին Իվան Ահեղի ժամանակների հետ:

16 ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 152:

Նկատենք, որ այսօրիական շեշտադրումները նամակներին լրացուցիչ համոզականություն հաղորդելու նպատակ էին հետապնդում՝ արձանագրելով գյուղացիների՝ արդարության հասնելու ակնկալիքները: Սակայն կոնկրետ այս դեպքում այդ ակնկալիքները չարդարացան: Ստորև կներկայացնենք մի հատված սույն նամակում նշված դեպքերը ստուգող կուսակցական պաշտոնյայի զեկուցագրից: Չեկուցագրի մեջ ի թիվս կոլտնտեսության նախագահի կատարած այլ չարաշահումների անդրադարձ կա նաև կարմիրբանակայինների կանանց նկատմամբ նախագահի անվայել վերաբերմունքին: Չեկուցագրում մասնավորապես նշված է. «Հակառակ մատերիալում թույլ տրված այս և նմանօրինակ մի շարք այլ փթուն արտահայտությունների՝ մի շարք ընկերների՝ ռայկոմի աշխատակից (բերվում է աշխատակցի անունը), ՄՏ կայանի աշխատակից (բերվում է աշխատակցի անունը), պարտկոմի քարտուղար (բերվում է քարտուղարի անունը) և այլոց հետ ունեցած երկարատև հարց ու պատասխանից հետո հագիվիազ այդ առհասարակ «բոլորին առաջարկել է», «ոչ մի կին չի մնացել առանց...» արտահայտությունների միջից դուրս կորզվեցին մի քանի կանանց անուններ, որոնց, ըստ նախնական տվյալների, կոլտնտեսության¹⁷ նախագահն առաջարկություն է արել: Այդ կանայք են (բերված են հինգ կնոջ անուններ): Վերոհիշյալներից (նշված են կանանց անունները) ստուգման ժամանակ թեև եկան ու միաբերան ցուցմունք տվեցին, որ իրոք իրենց առաջարկություն է արել կոլտնտեսության նախագահը, բայց նրանց ցուցմունքները հավատ չեն ներշնչում, որովհետև նրանցից.

ա) (բերվում է կնոջ անունը) 55 տարեկան մի պառավ կին է, ատամների մեծ մասը չկար, եղածներն էլ շարժվում էին լեզվի հարվածներից, խոսում էր այնպես, որ կարծես անգիր էր արել:

բ) (բերվում է կնոջ անունը) 50 տարեկան կին է, ունի ամուսնացած մի քանի տղաներ ու աղջիկներ, ոչ թե ամուսինն է բանակում, այլ տղան, ամուսինն անցած տարի հեռացվել է կոլխոզից՝ աշխօրի միսիմունը չկատարելու համար: Խոսում էր դարձյալ անգիր արածի պես:

գ) (բերվում է կնոջ անունը) թեև երիտասարդ կին է, բայց ամուսինը դատապարտված է քաղաքական հանցանքի համար, որի դատապարտմանն աջակցել է կոլտնտեսության նախագահ (բերվում է նախագահի անունը)...»: Չեկուցագրի վերջում ստուգողը կանանց արված կեղտոտ առաջարկները համարում է «կենցաղային երևույթներ», որոնց տեղի ունենալու կամ չունենալու մասին դժվար է վճռական եզրակացության գալ», և այստեղից հետևեցնում է, որ «...կարելի է կարծիք հայտնել այն մասին, որ կոլխոզի նախագահի՝ կանանց առաջարկություններ անելու մասին մեղադրանքը հիմնականում ճիշտ չէ, այլ հորինված մեղադրանք է»¹⁸:

Չեկուցագրից մեզ համար պարզ է դառնում, որ նամակում նշված փաստերը չեն արժանացել անաչառ գնահատականների: Այդպես ենք կարծում, որովհետև.

ա) Ստուգողը մատնագրում նշված փաստերի վերաբերյալ զրույցներ է ունենում ոչ թե սովորական կոլտնտեսականների, այլ կուսակցական և խորհրդային հիմնարկների՝ շրջկոմի, ՄՏ (մեքենատրակտորային) կայանի, կուսակցական

17 Քանի որ փաստաթղթերից արված են ուղղակի մեջբերումներ, հնարավորինս խուսափել ենք դրանց կետադրական կամ ուղղագրական խմբագրումներից:

18 ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 106, թ. 69:

տեղական կոմիտեի աշխատակիցների հետ: Դժվար է հավատալ, որ այս մարդիկ հավաստի տեղեկություններ կհաղորդեին, որովհետև նրանք աշխատում էին շրջանային հաստատություններում, որոնք, դատելով փաստաթղթերից, նյութական և աշխատանքային հարաբերությունների բազմափուլ թելերով կապված էին կոլտնտեսության վարչակազմի հետ: Կոլտնտեսության նախագահին վարկաբեկող փաստերի հաստատումը հանուն արդարության կամ էլ հանուն ինչ-որ կանանց կարող էր հղի լինել նաև իրենց կազմակերպությունների վարկաբեկման վտանգով, ինչը նրանց ղեկավարները երբեք թույլ չէին տա: Այս պարագայում գործում էր մի տեսակ ներքին համաձայնություն առ այն, որ ավելի անվտանգ է «վերևներին» ներկայացնել փաստերի այնպիսի մեկնաբանություն, որում կուսակցական աշխատողի վարքն անբասիր է կամ էլ գոնե զերծ է խիստ դատապարտելի արարքներից, իսկ նրա դեմ խոսողներն ուղղակի զրպարտիչներ են:

բ) Չեկուցագրում նկատվում են կանխակալ և սուբյեկտիվ գնահատականներ, որոնք ստուգողը տալիս է նախագահի դեմ վկայություններ տվող կանանց: Նրանցից մեկին՝ 55 տարեկան կնոջը, նա անվանում է «պառավ»: Իհարկե, պատերազմական օրերի ծանր վիճակը, հոգեկան ապրումներն ու ֆիզիկական զրկանքները կարող էին ազդեցություն թողնել կանանց արտաքինի վրա, սակայն այս դեպքում ակնհայտ է, որ ստուգողը ձգտում է կոլտնտեսության նախագահին արդարացնելու՝ նրան ներկայացնելով որպես զրպարտության զոհ: Ու սա արվում է գյուղացի կնոջ արտաքինի վերաբերյալ վիրավորական բնութագրումով նրան նսեմացնելու ճանապարհով: Չեկուցագրի ոչ արժանահավատ լինելու մասին ավելի խոսուն վկայությունը ստուգողի գնահատականն է այն կնոջը, որի ամուսինը դատապարտված է քաղաքական հանցանքի համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բռնադատված քաղաքացիները խորհրդային հասարակության մեջ հատուկ կարգավիճակ ունեին, և հաշվի առնելով խորհրդային իշխանությունների տարբերակված վերաբերմունքը ոչ միայն նրանց, այլ նաև նրանց ընտանիքների նկատմամբ՝ հասկանալի է դառնում ստուգողի ակնարկն այս կնոջ վերաբերյալ:

Դատելով նամակներից՝ գյուղացիները ոչ միայն գիտեին, որ իրենց մատնանշած փաստերը ստուգվելու են, այլև իրենք էին դա ցանկանում: Նամակներում հաճախ ենք հանդիպում նման արտահայտությունների՝ «եկեք, և ինքներդ կհամոզվեք», «բոլոր այս իրադարձությունների մասին տեղյակ են նաև շրջանում», «բոլորը կվկայեն, որ մենք չենք խաբում» և այլն: Եվ որպեսզի իրենց դիմումը զրպարտություն չընկալվի, խնդրում էին, որ կենտկոմից ստուգման ուղարկեն ազնիվ մարդկանց: Նման տողերի ենք հանդիպում, օրինակ, արդեն ներկայացված նամակում: «Մենք Ձեզ խնդրում ենք այս մատերիալը չվերադարձնել շրջան, այլ գործուղել մի լենինցու (ленинца), մի ազնիվ մարդու, ով կհավաքեր կուսակցականներին և կոմերիտականներին, որոնք ամեն բան կասեն...»¹⁹: Կարծում ենք, որ կուսակցական ստուգումների ժամանակ ստուգողի անձնական որակները դեր չէին խաղում: Փաստաթղթերի ուսումնասիրությունը մեզ հուշում է, որ ՀԿ(բ)Կ կենտկոմը գյուղական պաշտոնյաների գործունեությունը ստուգելու իր չափանիշներն ուներ: Օրինակ՝ Թալինի շրջանի գյուղերից մեկի կոլտնտեսության նախագահը հեռացվել էր պաշտոնից «կոլտնտեսության

19 ՀԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 152:

աշխատանքները չգլխավորելու, աշխատունակ կոլտնտեսականներին արտադրության մեջ չներգրավելու, աշխատանքային կարգապահությունը չամրապնդելու, աշխօրերի առաջին սեզոնի պարտադիր մինիմումը չապահովող կոլտնտեսականներին ժամանակին դատի չտալու, խոտհնձի պլանի կատարումը ձախողելու, պետության նկատմամբ ունեցած պարտավորությունները շատ վատ կատարելու...»²⁰ համար: Իսկ գյուղացիների հանդեպ կոպիտ վերաբերմունքի, կանանց նկատմամբ ոտնձգությունների պարագայում կոլտնտեսության նախագահներին պատասխանատվության ենթարկելու մասին որևէ փաստի մեր ուսումնասիրած նյութերում չհանդիպեցինք:

Սրանից ենթադրում ենք, որ կուսակցական ստուգողների հիմնական խնդիրն էր պարզել պետությանը հասցված վնասների չափը: Այդպիսիք չլինելու դեպքում նրանք, ըստ էության, աչք էին փակում տեղական չինովնիկների ապօրինությունների վրա: Կուսակցական կառավարման այս առանձնահատկությունը ռուս պատմաբան Սավինը բացատրում է հետևյալ կերպ. «Այսպես կոչված «շեղումները» բնորոշ էին 1930–ականների զանգվածային բոլոր կամպանիաներին առանց բացառության՝ սկսած կոլեկտիվացումից, վերջացրած Մեծ տեռորով: Իշխանությունը գիտակցաբար խրախուսում էր առավել եռանդուն աշխատողներին՝ **աչք փակելով նրանց հակահրավակյան գործողությունների, անկարգությունների և բռնության վրա**: Մի կողմից «շեղումների» միջոցով իշխանությունը նպատակաուղղված կերպով հասնում էր հերթական կամպանիայի առաջադրանքների կատարմանը, կլինեն դրանք հացամթերումներ, եկեղեցիների քանդում կամ «նախկինների» ոչնչացում, մյուս կողմից «շեղումը» իշխանությանը թույլ էր տալիս ստուգել հնարավորի սահմանները՝ առանց սեփական լեգիտիմությունը վտանգելու: Կամպանիայի ավարտին հետևում էր «շեղվածների» պատիժը (որպես կանոն՝ շատ մեղմ) «տեղերում թույլ տված անկարգությունների (эксцессы) խաղաքարտի օգտագործմամբ և կենտրոնական իշխանության կողմից «սոցիալիստական օրինականության» վերականգնումը»²¹: Կարծում ենք, որ սույն մոտեցումն ընդհանուր առմամբ գործում էր նաև պատերազմի տարիներին: Եվ պատերազմական իրողությամբ տեղական չինովնիկների վրա դրված պարտականությունները՝ ռազմաճակատի կարիքների բավարարման, թիկունքում աշխատանքների կազմակերպման առումով, տեղավորվում են հեղինակի նշած «կամպանիաների» տրամաբանության մեջ: Հետևաբար պետությունն աչք էր փակում այս առաջադրանքը կատարող առավել եռանդուն աշխատողների «փոքրիկ չարաճծիությունների» վրա: Այստեղ պետք է փնտրել նաև տեղական իշխանավորների ինքնավստահության պատճառները, որին իրենց դիմումներում հղում էին նաև բողոքների հեղինակները: Պետությունն արձագանքում էր միայն այն դեպքերում, երբ պաշտոնյաներն անցնում էին թույլատրելի վարքագծի սահմանները: Թույլատրելի վարքագծի չափանիշները հանգում էին պատերազմական շրջանում տնտեսական անհրաժեշտ ցուցանիշների ապահովմանը և կուսակցության առաջնային նշանակության հրահանգների կատարմանը: Ու թեև կարմիրբանակայինների ընտանիքների նկատմամբ պետական հոգածություն կար, սակայն նրանց կանանց նկատմամբ վերաբերմունքի հարցերը կուսակցական քաղաքականության

20 ՉԱԱ, ֆ. 1, ց. 21, գ. 104, թ. 173:

21 Савин А., Письма во власть как специфическая форма политической адаптации советских граждан в 1930–е годы, Вестн. НГУ. Серия: История, филология. 2016. Т.15 № 8: История, с. 134.

առաջնահերթությունների մեջ չէին մտնում:

Մենք արդեն նշել էինք, որ նամակներից մեկում գյուղացիները խնդրում են իրենց դիմումը չվերադարձնել շրջան, այլ ընթացք տալ դրան: Դիմումը չվերադարձնելու մասին կոլտնտեսականների խնդրանքը հետաքրքիր է այն իմաստով, որ բնութագրում է խորհրդային բյուրոկրատական մեքենայի առանձնահատկություններից մեկը: Հաճախ դիմումներն ու խնդրագրերը, տարբեր աստիճաններով անցնելով, այսպես կոչված «գրասենյակային շրջապտույտ» էին կատարում, և նրանցում մատնանշվող խնդիրներն այդպես էլ լուծում չէին ստանում: Ասվածը փաստող հետաքրքիր մանրամասներ ենք կարդում ՀԽՍՀ դատախազության զեկուցագրերից մեկում, որը 1942 թվականին ուղարկվել էր ՀԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Արամ Փիրուզյանին և կոմկուսի կենտրոնի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանին: Ներկայացնենք փոքր հատված նշված զեկուցագրից. «Գորիսի շրջխորհրդի գործկոմի նախագահն ու մյուս աշխատողները հաճախ Նույնիսկ չեն կարդում դիմումները, այլ միայն մակագրում են դրանք կոլտնտեսություններին և գյուղխորհուրդներին: Այդ իսկ պատճառով արձանագրվել են շատ դեպքեր, երբ իրենց օրինական պահանջները չկատարելու պատճառով դիմումատուները շրջխորհրդին դիմել են երկրորդ, երրորդ անգամ՝ իրենց դիմումը տեղում ստուգելու և բավարարելու խնդրանքով: Սակայն գործկոմի նախագահը մշտապես մակագրել է կոլտնտեսության նախագահին՝ «Բավարարել»: Նույնիսկ այս մակագրությունից հետո ոչ ոք չի հսկել իր իսկ կարգադրությունների կատարման ընթացքը: (Բերվում է երկու կանանց անուն)՝ ներկայացրել են բողոք առ այն, որ կոլտնտեսության նախագահը հրաժարվել է իրենց օրինական պահանջները կատարելուց: Շրջխորհրդի գործկոմի նախագահը բոլորի դիմումներին դրել է միևնույն մակագրությունը՝ «Գյուղխորհրդի նախագահին՝ աջակցել»²²: ՀԽՍՀ դատախազության մեկ այլ զեկուցագրում նշվում է, որ ստուգումների ժամանակ Վեդու շրջանի գյուղխորհուրդներում բացահայտվել են կարմիրբանակայինների ընտանիքների անդամների դիմումների հանդեպ անփույթ վերաբերմունքի դեպքեր: Սրանք թափթփված են եղել դարակներում կամ բաց տեղերում: Ստուգողն իր վրդովմունքն է հայտնում առ այն, որ այսօրինակ դեպքերը խոսում են կարմիրբանակայինների ընտանիքների կենսական պահանջների նկատմամբ գյուղխորհուրդների անպատասխանատու, բյուրոկրատական և «անհոգի» վերաբերմունքի մասին²³: Չեկուցագրում ներկայացված փաստաթղթերի այս շրջապտույտը մեզ հնարավորություն է տալիս մի կարևոր դիտարկում անելու: Եթե պատկերացնենք, օրինակ, որ որևէ գյուղխորհրդի նախագահի՝ գյուղի կանանց նկատմամբ սեռական կամ ֆիզիկական ոտնձգության մասին նամակ է ստացվում շրջխորհուրդ, այնտեղ այս նամակը չի ընթերցվում, այլ նորից մակագրվում է տվյալ նախագահին, ապա ստացվում է, որ այս կանայք ոչ միայն արդարադատություն չէին գտնելու, այլև հայտնվելու էին գյուղխորհրդի նախագահի անձնական վրեժխնդրության թիրախում:

Գյուղխորհուրդների աշխատանքների ստուգումների ժամանակ բացահայտվել են նաև կարմիրբանակայինների ընտանիքների նպաստը, նրանց հասանելիք նյութական աջակցության այլ ձևերը ուշացնելու կամ էլ անօրինական

22 ՀԱԱ, ֆ. 1, ց. 22, գ. 178, թ. 19:

23 ՀԱԱ, ֆ. 1, ց. 23, գ. 81, թ. 104:

ճանապարհով նրանց աջակցությունից զրկելու դեպքեր: Կարմիրբանակայինների ընտանիքներին նյութական աջակցություն հատկացնելու հարցը կարգավորում էին հատուկ հանձնաժողովները՝ ըստ գյուղխորհուրդների ներկայացրած ցուցակների: ՀԽՍՀ դատախազի 1942 թվականի ստուգումներից մեկի արդյունքում պարզվել էր, որ մի շարք շրջաններում նպաստառու ընտանիքների ցուցակները հանձնաժողովներին ներկայացվում են ուշացումներով (սորակոչիկի բանակ մեկնելուց 2–3 օրվա ընթացքում գյուղխորհուրդը պարտավոր էր նրա ընտանիքը ընդգրկել նշված ցուցակներում, մինչդեռ շատ դեպքերում այս ժամկետը կարող էր ձգվել մինչև հինգ ամիս), իսկ շատ դեպքերում այդ ցուցակները կազմվում են խախտումներով, այդ իսկ պատճառով այնտեղ կարող են հայտնվել մարդիկ, որոնց համար օրենքը նպաստ չի նախատեսում²⁴: Մեր ներկայացրած նյութերի լույսի տակ կարելի է ենթադրություններ անել այն մասին, թե ինչու էին գյուղխորհուրդները ուշացնում այս ցուցակները: Արդյո՞ք սա հետևանք էր խորհրդային հիմնարկներում ամկա բյուրոկրատական քաջքուկների, թե՞ գործ ունենք կոռուպցիոն գործելաոճի հետ, երբ գյուղխորհրդի նախագահն ինքն էր իր հայեցողությամբ որոշում ում ընդգրկել այս ցուցակներում, ինչի միջոցով ամրապնդում էր իր իշխանությունը գյուղում՝ կոլտնտեսականներին դնելով իրենից անձնական կախվածության մեջ: Եվ այս բյուրոկրատական գործընթացներում կանայք, հատկապես նրանք, որոնց ընտանիքներից բացակայում էին տղամարդիկ, դառնում էին այդ տեղական «իշխանների» առավել անպաշտպան թիրախը:

24 Չեկուցագիրն ամբողջությամբ տե՛ս ՀԱԱ, ֆ.1, ց. 22, գ. 178, թ. 43–50:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ մեր ուսումնասիրած արխիվային նյութերի հիման վրա կարող ենք ամփոփել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին խորհրդային Չայաստանի գյուղական բնակավայրերում կանանց կյանքը բնութագրող որոշ իրողություններ:

Պատերազմի տարիներին խորհրդային Չայաստանի գյուղերը հայտնվել էին սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Պատերազմական վիճակով պայմանավորված՝ դժվարություններին գումարվել էին նաև տեղական չինովիկների դիրքի չարաշահումներ, ինչի արդյունքում ավելացել էր ոչ միայն գյուղերում մնացած բնակչության (մեծ մասամբ կանանց, ծերերի և երեխաների) առանց այն էլ ծանր սոցիալական բեռը, այլ նաև այդ չինովիկների կողմից հոգեբանական և սեռական ոտնձգությունները, որոնց ենթարկվում էին իրենց տղամարդկանց ռազմաճակատ ուղարկած կանայք: Կոպտության, ֆիզիկական ու սեռական ճնշումների և տնտեսական հալածանքների դեմ կանանց պայքարի տարածված ձևերից էին հանրապետության կուսակցական և պետական բարձր ղեկավարությանը դիմում-բողոքները, որոնք, սակայն, սպասված արդյունքը չէին ունենում: Ուսումնասիրված նյութերը ցույց են տալիս, որ պատճառներից մեկը խորհրդային իշխանությունների՝ կանանց հիմնախնդիրների ամբողջական և խորքային ընկալումների բացակայությունն էր, ինչպես նաև հանրային կյանքում դրանց նշանակության թերագնահատումը: «Կենցաղային երևույթների» մակարդակի դատողություններն այս հիմնախնդիրներն իշխանությունների աչքում դարձնում էին երկրորդական: Այս իրողության գիտակցումը կանանց ստիպում էր որոշակի մարտավարությամբ կշիռ հաղորդել իրենց իրավունքների ոտնահարման հարցին, և ինչպես տեսանք իշխանություններին ուղղված նամակներում, շատ դեպքերում այս հարցին քաղաքական և գաղափարական նրբերանգներ էին հաղորդվում: Նպատակը կանանց իրավունքները գաղափարական գործող արժեհամակարգերում ներառելն էր: Սակայն իշխանությունների գործելակերպը ենթարկվում էր այլ տրամաբանության, որում առաջնայինը պատերազմական ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական մարտահրավերների հաղթահարումն էր: Եռանդուն և նախաձեռնող վարչարարները, որոնք ունակ էին թիկունքում ապահովելու կուսակցական առաջնահերթությունները, այդ իսկ կուսակցության կողմից «չհայտարարված» ձևով ստանում էին որոշ արտոնություններ: Նրանց կոպիտ, շատ հաճախ անպատկառ և ամբարտավան վարքագիծը պետք է դիտարկել նշված արտոնությունների համատեքստում:

Վերջում կուզենայինք ավելացնել, որ հիմնված լինելով սահմանափակ թվով արխիվային սկզբնաղբյուրների վրա՝ սույն ուսումնասիրությունը հետազոտական ավարտուն և ամբողջական գնահատականի հավակնություններ չունի, եթե հաշվի առնենք նաև կանանց հիմնախնդիրներին առնչվող հարցերի բազմաշերտությունը: Սույն աշխատանքի գլխավոր արժանիքը համարում ենք այն, որ ներկայացված նյութերը և դրանց հիման վրա կատարված բացահայտումները կարող են ճանապարհի հարթել խորհրդային տարիներին կանանց հիմնախնդիրները լուսաբանող գիտական նոր ուսումնասիրությունների համար:

